«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

«08» ապրիլի 2026թ.

ԱՁ ՍԱՐՈՒԽԱՆ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ
/Հասցե՝ ք. Երևան, Նոր-Արեշ 15 փող. 7 շ., 12 բն/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին)

2025 թվականի հուլիսի 31-ին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/52-5 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

31.07.2025թ. կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/52-5 ծածկագրով պայմանագրի Հավելված N 2-ով հաստատված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ հրավերով նախատեսված 37 չափաբաժնի համար մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 21 օրացուցային օրը:

21.08.2025 թվականին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի և ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի միջև կնքվել է 31.07.2025թ. կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/52-5 ծածկագրով ապրանքների գնման պայմանագրի N 1

համաձայնագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածներով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով և վճարման ժամանակացույցով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզել է, որ սահմանված ժամկետում Վաճառողը չի ապահովել ապրանքի մատակարարումը, որի արդյունքում՝ 01.04.2026 թվականին ԱՁ Սարուխան Բրուտյանին է հասցեագրել գրություն այն մասին, որ սույն թվականի ապրիլի 1-ի դրությամբ պայմանագրով նախատեսված 37-րդ չափաբաժնի ապրանքները մատակարարված չեն և հիմք ընդունելով ապրանքի խիստ անհրաժեշտությունը՝ պայմանավորված Երևան քաղաքում սանմաքրման աշխատանքները պատշաճ կազմակերպելու հանգամանքով, առաջարկվել է մինչև սույն թվականի ապրիլի 6-ը մատակարարել ապրանքը, այնինչ ներկայացված գրությանը որևէ ընթացք չի տրվել և ԱՁ Սարուխան Բրուտյանի կողմից պայմանագրով նախատեսված 37-րդ չափաբաժնի ապրանքը չի մատակարարվել:

<< քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

<< քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

<< քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ

պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ Սարուխան Բրուտյանը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ *պայմանագրի ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ համապատասխանաբար 28.500 (քսան ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և 42.750 (քառասուն երկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված՝ համապատասխանաբար «900008000664» և «900008000698» գանձապետական հաշվեհամարներին, ապա

պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ

ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ